

Ամբաստանաբար
համբարուքիւն «Փիիւնիկ»,ի
Աղեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

ՏՐ. 15
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6



ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ


ՇԱԲԱԹ 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 25

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեգիսի)



Ա.

Ա. Տարիները

(Շար. ԻԴ. թիւն)

Իր ստնտունն Հելլենուհի մ'էր Թի-
նո կղզիէն, կայտառ, քաջառողջ, սեւ
աչուի, սեւ ընքուի, վառվռուն, բիրտ
ու անյագ, անկեղծ ու գուրգուրացող
իր ծծկերին վրայ: Օր մը գրկեց զանի
եկեղեցին տարաւ. վերադարձին, երբ
հայրը հարցուց իրեն թէ եկեղեցին
ի՞նչ տեսած էր. «գլուխներ» պատաս-
խանեց. հայրը սրբագրել ուզեց, «բազ-
մուքիւն» ըսէ՛, ըսաւ:

Առաջին տարիները սահեցան ա-
րագ արագ, ու Տիգրան եղաւ 4 տա-
րեկան, սիրունիկ, անուշիկ մանկիկ
մը: 1874ի տարին դժբաղդ տարի մը
եղաւ Պիլեգիսի գերդաստանին հա-
մար: Մանուկն Կարապետ որը մնաց,

զրկուելով իր գորովագուլթ հօրմէն,
որ հազիւ 27 տարուան, այրի թողուց
իր երիտասարդուհի կինը, որ պարտա-
ւորեցաւ այնուհետեւ երթալ բնակիլ
իր ծնողքին Տիար և Տիկին Կարապետ
Թընկերի տունը, հետը տանելով իր
անդրանիկը Կարապետ, ու միւս երկու
փոքրիկները Մարտիրոս ու Գրիգոր:

Տիգրան միշտ կարօտով կը յեշէր
իր մանկութեան առաջին 5 տարիները,
որոնց համար հառաչանք մ'ունէր
միշտ:

Թընկերը գերդաստանին մէջ կը
մեծնար ու կը զարգանար. իր պապը,
տաղանդաւոր ու բարձր կրթութիւն
ստացած բնագնին մը, որ արուեստնե-
րու խորունկ ըմբռնումն ալ ունէր, իր
մասնաւոր հոգածութեան առարկայ
ըրած էր իր որը թողնիկը, որուն ա-
ռաջին դաստիարակութեանը ինք կը
հսկէր: Յաճախ հետը պտոյտի կը տա-
նէր Կ. Պոլսոյ ամենագեղեցիկ զբօսա-
վայրերը, հրաշագեղ բնութեանը ծո-
ցին մէջ կ'ուզէր յօրինել ու սնուցա-
նել թողնիկին մատղաշ սիրտը. կա-
պուտագեղ ծովին ու կանաչազարդ

բլուրներուն անսքովը կը փորձէր մը-
շակել անոր երեակայութիւնը: Պէօ-
յիւքտէրէի գեղածիծաղ ծովեզերքն ի
վեր, քանի՛ քանի անգամներ շրջա-
գայութեան ելած էր անոր հետ, թոռ-
նիկին, որը թոռնիկին, փոքրիկ կարա-
պետին հետ, որ ի՛ր ալ անունը ըլլա-
լուն՝ աւելի՛ անուշ կը հնչէր իր սական-
ջին: Այդ կարապետ անունը սակայն
փոխուեցաւ յետոյ՝ Տիգրան Երկաթի (1):
Քեաղըտխանէի հովիտներն ի վար, Իւս-
կիւտարի անտառներուն խորը, կղզիին

(1) Ռըվիւ սե Ռըվիւ ի հրատարակած
կենսագրական տեսակին սկիզբը հետեւեալ
բացատրութիւնը կը տեսնուի Տիգրան Երկաթի
անուան առթիւ. «Կը բուի քե՛ Տիգրան Եր-
կաթին դեմք՝ կրտսուած, ինք իր բաղդին
բողուած Հայաստանին անձնաւորումն ըլլայ:
Հայերը չը պիտի մոռնան անոր հայրենասիր-
ական ու գրագիտական փառաւոր ու կրկին
դերը, որ ծանօթացուց Հայաստանի պատմու-
թիւնն ու գրականութիւնը երկու աւելարհ-
ներուն մէջ, եւ որ, մեծ աղեքսի օրերուն
մէջ անգամ, երբեք չէ ուզած հրաժարիլ
Մայր-Հայրենիքին անկախութենէն: Ամբողջ
կեանքին մէջ չափաւորութիւնն ու կոչ քար-
զելէ յետոյ առ մարդասէր Եւրոպան, ջախ-
ջախուած ու յոգնած՝ վիրագ ու անասնական
անարդարութեան տեսարանէն, որ «քիսոն-
եայ ու քաղաքակիրթ», բնուած երկիրներուն
մասնակցութեամբը, անդադար կը հալածէ
մարտիրոս ժողովուրդը, զնաց կտակելով իր
եղբայրներուն այս խրատը կսկծալի տեսու-
թեամբ մը:

«Խորհակելով սկզբունքները որոնց հա-
մաձայն ժողովուրդները կը համախմբուին
իբրեւ ողջ ու իրենց ծոցէն կ'արտաստեն օ-
տար տարերքը, Եւրոպան մեզի կը մերժէ ինչ
որ պարզեւեց Ռուսներուն, Սերպերուն,
Յոյներուն, Պուլկարներուն. խորհակելով
սկզբունքները, որոնց համաձայն անի կը կա-
ռավարէ Ափրիկէն ու Ասիոյ դաշտավայրերը
(Steppe), մեզի կը պարտաւորէ ստորին տեսակ-
ներու լուծին տակը ծռելու: Հայե՛ր, չը կա՛յ
բարոյական, ոչ ալ արդարութիւն՝ ժողո-
վուրդներուն միջեւ: Մենք մեզի՛ տակ, ա-
նասնական ուժ տակելով, մեր հողին վրայ
անկախ ապրելու իրաւունքը, կամ ջանա՛նք
հոն մեռնելու պատիւով»: (Մ. Ռըվ. Խ.)

դարեանդներուն վրայ, թոռնիկին
դաստիարակ – պապը, կարապետ թըն-
կըր՝ եղբօրը թոռնորդին էր Պետրոս
Թընկըրի, հռչակաւոր բազմալեզուագէտ
ու հելլենասէր փիլիսոփային, որ Սուլ-
թան Մահմուտ Բ. ի Հռովմէզաւան
Հայերուն դէմ հանած Հալածանքին
երեսէն փախած էր Կ. Պոլսէն ու գնա-
ցած հաստատուած էր Զմիւռնիա: Այս
իմաստասէրը, ժուժկալ ու սակաւա-
պէտ բուսակեր մը, մենակեցիկ կ'ապ-
րէր իր դղեակը քաջուած, զոր ի՛նք
կառուցանել տուած էր Զմիւռնիոյ
բլուրներէն մեկուն գագաթը, ուր
կ'անցընէր իր բոլոր ժամանակը, կ'սպա-
ռէր իր բոլոր հարստութիւնը, ստեղծե-
լու համար ասրերքը տիեզերական
լեզուի մը, զոր յորջորջեց Սենյէրայ
և զոր ի զուր ջանաց ընդհանրացնելու
և տարածելու իր բոլորտիքը, մինչև
որ մեռաւ խոր ծերութեան հասակին:

Արդ, այս բանաստեղծ — լեզուա-
գէտ — իմաստասէր — բարոյագէտ —
հելլենասէր Պետրոս Թընկըրի հարա-
զատ և հաւատարիմ ժառանգն եղաւ
Տիգրան Երկաթ, որ իր Մեծ-Վարպետին
թերին լրացուց, մանաւանդ հելլենա-
սիրութեան մէջ, զոր իր կատարելա-
գործութեանը հասուց:

Տիգրանի պապը, շերմեռանդ կա-
թոլիկ մը, իրմէ զատ ուրիշ մէկու մը
չէր կրնար վստահիլ իր թոռնիկին
կրթութեան ու դաստիարակութեան
փափուկ գործը. արդէն իրենց բարե-
կեցիկ հանգամանքը կ'ընծայէր ամեն
գիւրութիւն տանը փոքրիկներուն
մասնաւոր ուսուցիչներ կարգելու. և
զանոնք հասարակ դասակարգի տղայոց
հետ շփումէն զերծ պահելու համար
իրենց թաղին կամ ուրիշ տեղի մը
վարժարանը զրկելէ կ'զգուշանային
նոյն ատենուան ազնուական համար-
ուած ընտանիքները, որոց մէջ առա-
ջին տեղը բռնած էր Թընկըր գերդաս-
տանը: Հռովմէզաւան Հայերուն հա-

մոզուներուն մէջ ընդհանրապէս տիրող գաղափար մը կար, այն է, իրենց զաւակներուն սովորեցնել տալ ընտիր ֆրանսերէն մը, որուն մաքուր ու ճիշտ արտասանութիւնը ձեռք կը բերուի, կըսէին, Ֆրանսայի մէջ միայն:

Մտածումի այս ուղղութեան ու դատելու այս եղանակին մէջ շատ բնական էր հետեցնել թէ՛ Կարապետ թոռնիկը սահմանուած էր քանի մը տարի յետոյ Ֆրանսա զրկուելու, հոն սովորելու համար ֆրանսերէնը, որ այն շրջանին, ամենէն աւելի ի պատուի ու յարգի լեզուն էր. սակայն, մինչև յարմար տարիքը Ֆրանսա զրկուելու, հարկ էր Կարապետիկը նախապատրաստել, գոնէ տալրական ծանօթութիւններով օժտելով անոր մատաղ ուղեղիկը: Եւ որովհետև ֆրանսերէնի մաքուր ու ֆրանսացի արտասանութեան անհրաժեշտութիւնը բացարձակ պայմաններէն մին էր անոր կրթութեանը, փորձառու և խնամոտ պապը որոշեց հայերէնի նախնական դասեր աւանդել տալ թոռնիկին, մասնաւոր ուսուցիչ մը կարգելով: Ու կարգուեցաւ այդ մասնաւոր ուսուցիչը, հայ-հռովմէական եկեղեցւոյ պատկանող վարդապետ մը:

Կարապետ այս մասնաւոր ուսուցչին քով դաս կ'առնէր հայերէն, աշխահագրութիւն, պատմութիւն, ազգային ռամկական երգեր: Մանկական ա՛յնքան մատաղ տարիքին մէջ, հայերէն բառ մ'իսկ չ'գիտնալով, սիրով կը սերտէր բերանացի հայկական նահանգներու հին անունները, հայ թագաւորներուն ու նախարարներուն յաղթութիւնները տըզայական զմայլանքով մը կը սիրէր պատմել ամեն հանդիպողի:

Պապէն զատ, մայրն ալ կը մասնակցէր իր սիրուն զաւկին դաստիարակութեան, յաճախ պատմելով մանրավէպեր ու առասպելներ: Դաստիարակ — Ուսուցչուհի մ'ալ ունէր, Միս Գրըզիս — քոյրը մեծանուն արևելագէտ կա-

նոնիկոս Գրըզիսի, որ շատ մը գործեր յօրինած է արևելեան ազգերու կեանքերուն վրայ, որոնց մէջ յիշատակելի է Քրիստոսի ծննդեան քարայրն այցելող 3 մոզերուն վրայ շահեկան հրատարակութիւնը, որուն մէջ ջանացած է հաստատել թէ այդ մոզերէն մէկը Հայ էր —: Այս օրիորդն սկսաւ Կարապետին առաջին ֆրանսերէն դասը, Ալքսայէ իշխապոյի գասագրքին վրայ:

Մայրը, Տիկին Կ. Պիլէզիքճի, տիպար մայր, այրիութեան մէջ իրեն համար միակ մխիթարութեան առարկայ ըրած էր իր երեք որբերը, մանաւանդ իր անդրանիկը, որուն վրայ կարծես թէ կեդրոնացուցած ըլլար իր բոլոր մայրենի սէրն ու բոլոր գորովը: Միշտ քովին էր, միշտ կը հսկէր, միշտ կը գուրգուրար ու կը փայփայէր, սիրաձայնելով զանի Կարա, փափկահընչին երկավանկ անուն մը, որ նոր հրապոյր մը կը բերէր աւելցնել թոռնիկին շուրջը, որ արդէն ընդհանուր ազապատանքին ու մասնաւոր խնամածութեան առարկան ըլլալէ չէր դադարած:


Ընկերութիւն, հանդէսներ, երգ ու հաւաքոյթներ. ահա՛ Կարայի սիրական բաները. ինք, դեռ անտիական, իր վրայ սկսած էր ցոյց տալ զգացող, մտածող լուրջ մարդու մը նշանները. նայուածքը տակաւ խօսուն կը դառնար ու խորհել կուտար, 'ի մասնաւորի իր պապին, եր, քանի՛ աճէր թոռնիկը, ա՛յնքան աւելի կը զօգուէր ու կը շաղուէր հոգիով անոր հետ: Խորհուրդ մը կարպապին ու թոռնիկին յարաբերութեանը միջև. պապին մեծ հօրեղբօրը Պետրոս Թընկերին ու իր թոռանը Կարապետ Պիլէզիքճիին միջև ինքզինք կամուրջ մը կը նկատէր, միացման գիծ մը, որ հանճարները կը կապէր իրարու. հանճարը՝ որ ալ չ'կար, հանճարին հետ՝ որ նոր կը ծագէր: Կարա՛ կարգասէր ու կոկիկ, քիչ մ'ալ եսասէր էր

ամեն անգամ որ մինակ մնար, կը տեսնէին զինք մկրատիկ մը ձեռքը, լրագիրները կը մկրատէր, կերպ կերպ ձեւերու կը վերածէր թուղթը, մտացածին ու քմածին նկարներով կը սեցնէր յաճախ իր տետրակները: Այս բոլորին հետ գերազանցօրէն մաքրասէր էր: Իր ստնտուին հսկողութիւնն սկսած էր տակաւ տանելի չ'ըլլալ, յորմէ հետէ Հելլենուհին, բարձրէն բխած հրամանի մը ուժով, կը բռնանար Կարայի մանկական բնագրու մներուն վրայ, արգիլելով անմեղ խաղերը, պատրուակելով թէ հագուստները կ'աղտոտուէին:

(Շարունակելի) Ս. ԲԻԻՐԱՏ

ՅԱԿԵԼՈՒՄԾԻՆ ԱՌԹԻԻ

ԽՕՍԲ Մ՛ԱԼ ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԱԹԻՒՐՈՂՆԵՐՈՒՆ



Արդի փառայրնսիր Պատ. Թաղական Խորհուրդը գրչի հարուածով մը մէկ վայրկեանի մէջ կազմով ու ոգիով սահմանադրական շինող, անոր առժամեայ հանգամանքը անպարարական գաւազանին ծայրովը կամովին առժամեայ դարձնող, համբ փուխուփր լեզուի հանող եւ... «ՆԻ՛» լրագիրը երջանկայիշեասակ խմբագրովը մէկտեղ ի մեռելոց յարուցանող հրաւազած Պարոնը, ժամանակէ մ'ի վեր՝ գրական իր բուն սեռը գսած էր միմաստօտփեսա — գաւեսական Քանթազիներու մէջ, որոնք գէթ մէկ առաւելութիւն ունէին իր միւս գրուածքներուն վայ. — մինչդեռ միւս գրուածքները լրջօրէն առնելով՝ ժողովրդի հասցէին նախասինք կամ օրէնքին ու նմանութեան դէմ հոյսոյութիւն կը նկատուէին, այդ բափքփուկ Քանթազիները ուրիշին վնասելէ հեռի՝ մի միայն կարգացողներուն ծիծաղը կը քարծէին... հեղինակին վրայ: Կուզէինք միտս այդ կասակերգութիւնը մէջ տեսնել զինքը:

Այս անգամ սակայն, մէկ քանի մեղսակիցներու աջակցութեամբ՝ 323 հոգիներու ուղղամտութիւնը պոռնկացրնելու յաջողելովը — սխաւործութիւն մը որով կրնայ պարծիլ այնչափ որչափ 210ի հասցէին ժայթքած նախասինքներովը — համարանկութիւն ստացեր է նորէն լուրջ հովե առած՝ հրապարակ նետել նոր Յարեշուած մ'ալ (Արեւոյն, թիւ 220, Հոկտ. 12):

Այդ Յարեշուածով մէկ բան միայն կապացուցանէ. նմանութիւնը եւ լոյսը ինչքան ալ պայծառ փայլին, ինք պիտի շարունակէ ստութեան խախտոս կրուանին վրայ մնալ եւ խաւարի նամբաներուն մէջ դեգերիլ:

Յարեշուածը ուղղակի մեզի դէմ պատասխան մը չէ՛, այլ ուղղուած է «Փարոս»ի հասցէին: Մեր յողուածներուն դէմ որոնք իրեններուն կէտ առ կէտ հերժումներն էին՝ խոհեմութիւն համարած է զաբարիական շոթիւնը պահպանել. այդ լոութիւնը սակայն արդէն «փառաւոր տեսակէն» պերնախօս երեւոյթ մ'է ինքնին որը բանիմաց ընթերցողներու ուշադրութիւններէն չը վրիպեցաւ: Այդ լոութիւնը պատճառ մը չէ սակայն որ մենք այդ չնաղ Յարեշուածը չ'ներկայացնենք ընթերցողներու դասաստանին, մանաւանդ երբ մէջտեղ 323ի բարձր գայթակղութիւնը կայ: Շահեկանութենէ զուրկ չէ այն նաեւ սա տեսակէտով որ, հեղինակին միւս բոլոր գրութիւններուն պէս, փառաւորապէս կը հաստատէ ինչ որ ինքը կուզէ... հերժել:

Յարեշուածին ամենամեծ մարը կը գրաւէ Աղեմասնորիոյ եւ Գանիբէի յարաբերութեանց խնդիրը, որը թէեւ առնչութիւն ունի Սահմանադրութեան գործադրութեան ընդհանուր հարցին հետ, բայց ի ներկայիս անմիջական վէճի նիւթ եղող խնդրէն դուրս կրնայ նկատուիլ. մենք կը վերապահենք այդ մասին մեր կարծիքը յայտնել, չուզե-

լով վիճաբանութիւնը աւելի ընդարձակել ու հիւղաւորել, քանի որ աւխարհածանօթ իրողութիւն մը խեղաքիւրելու ջանքերը դեռ զինաբափ եղած չեն երեւիր, — քանի որ, կըսեմ, Օթէլ ԽՏԻՎԻԱԼԻ մէջ ծնած եւ «*անժառանգ թաղ. Խորհուրդ*» անունով մկրտուած մարմին մը՝ ժողովրդէն ընտրուած օրինաւոր եւ *հարազատ* թաղական Խորհուրդ մը կարծեցնելու խաբեբայութիւնը դեռ կը շարունակուի: Երբ անգամ մը Սրբ. Առաջնորդը հանչնայ Սահմանադրութեան հսկելու իր կոչումը, երբ բռնաբարիչները Օրէնքին գործադրութեան յօժարամտութիւն ցուցնեն, այն աժեռ ինքնին կը ներկայանայ եւ դիրաւ կը լուծուի այդ գործադրութիւնը բազմակողմանի եւ լիակատար դարձնելու բնական հարցը:

Գալով բուն վէճի խնդրոյն — Արդի թաղ. Խորհուրդը 1899ի Խորհրդին շարունակութիւնն է թէ ոչ — այս մասին մեր կողմէ առաջ բերուած ժխտական փաստերէն եւ ապացոյցներէն երկուքին, որոնք «Փարոս»ի կողմէ ալ մէջ բերուած էին, կը փորձէ պատասխանել:

Այս ապացոյցներէն առաջինն է Վսեմ. Կարապետ Պէյ Ռէփտանի *ստորագրութիւնը* կրող պատշտագիրը (*Տօֆիւնակը*): «Թղթակից» ծածկանունին սակ կծկած մեր ծանօթ յաւելուածագիրը կը փութայ ըսել թէ «Այդ նամակին նկատմամբ արդէն խիստ ընդարձակ բացատրութիւն տրուած ըլլալով այս էջերուն մէջ, նորանոր կրկնութիւններով ընթերցողները զբաղեցնելէ կ'զգուշանանք.» Փլունիկի ընթերցողները արդէն տեսան որ այդ «խիստ ընդարձակ բացատրութիւնները» ուրիշ բան չէին բայց միայն սուտերու, խեղաքիւրումներու, հակասութիւններու եւ սուփեսութիւններու աննոտի խառնուրդ մը որը իրաւամբ կոչեցինք *Անպատկառ իմաստակործան գլուխ գործոցը*: Մեր ըն-

թերցողները արդէն տեսան որ այդ «բացատրութիւնները իրենց ամբողջութեամբը *մէկ կոտ չեն արժեր* եւ անկարող են իրականութիւնը մագի չափ փոխելու, կամ թէ ըսենք՝ փոխելու իմաստը յայտարարութեան մը որ ո եւ է մեկնութիւն չ'վերցնէր. ա'յնքան մեկին, ա'յնքան պայծառ, ա'յնքան բացօրոշ է այդ յայտարարութիւնը. — Վսեմ. Պօլոս Փաշայէն կարգուած *Թաղական Խորհուրդ*» են:

Երկրորդ, մեր կողմէ մէջ բերուած եւ «Փարոս»ի կողմէ կրկնուած մէկ ապացոյցն ալ՝ նախորդ թաղ. Խորհրդոյ վերջին նստին *աժեռագրութիւնն* էր. պահանջած էինք հրատարակութիւնը այդ գրութեան որը կրնար լոյս սփռել վէճի նիւթ խնդիրներուն վրայ: Արդ, Պատ. թաղ. Խորհրդոյ մէկ դիրահասկանալի բարեհաճութեամբը՝ «Թղթակից»ը վերջապէս հրատարակ կը հանէ այդ կարեւոր վաւերագիրը, այն միամիտ (°) վստահութեամբ թէ իր պատշտագրած դասին ի նպատակ բանկագին վկայաբուրք մը պիտի նկատուի այն: Այդ վաւերագիրն ալ սակայն, ինչպէս ուրիշ ամեն բան, կը հաստատէ... Մե՛հ ԸՍՍԾՆԵՐԸ, եւ կը հերքէ Տիար յաւելուածագրին մէկէ աւելի խեղաքիւրումները եւ *հնարապատում* հաստատութիւնները:

Վերլուծենք, ու պիտի տեսնենք.

Ահա նախորդ թաղ. Խորհրդոյ վերջին նստին Աժեռագրութեանէն քաղուածքներ բառ առ բառ: Փակագծի մէջիւնները մեր կողմէ խորհրդածութիւններ են.

«Ի վերջոյ Վսեմ. Աժեռագրէ Փաշայի յայտարարեց թէ... դժբաղդաբար վերջերս ստացաւ Արմենակ էժ. Կամսարականի մէկ նամակը որով այս վերջինը կը հրատարէր թաղ. Խորհրդոյ անդամակցութեան եւ թէ եւ Ն. Վսեմութիւնը փութացած էր պատասխանել՝ եւ կոչում ընելով անոր ազ-

գասիրական գգացումներուն՝ խնդրել
 որ գէթ ներկայ պարագաներուն մէջ իր
 հրաժարականին վրայ չի պնդէ, սա-
 կայն Ն. Վսեմութիւնը այս առաւօտ
 իսկ յիշեալէն ստացած էր երկրորդ նա-
 մակ մը որով կը կրկնէր իր հրաժարա-
 կանը, *պատճառ ցոյց տալով իր գոր-
 ծերու շատութիւնը եւ իր անձնական
 սկարտիքները* (ինչպէս մեք կըրտէին,
 եւ ո՛չ թէ իրեն եւ միւս պաշտօնակից-
 ներուն օրէնագէտ չըլլալը, ինչպէս կու-
 գէր հաւաստանել Տ. Մկրտիչեան) որոնք
 անկարելի կընծայեն իրեն իր պաշտ-
 օնին խղճի մտօք կատարումը:

«Ն. Վսեմութիւնը ընդունելով յա-
 ուաջ բերուած պատճառները եւ յարե-
 լով թէ ո՛չ ոքէ կը պահանջուի իր
 անձնական գործերը եւ առողջութիւնը
 գոհելը (հոս ալ օրէնագէտ ըլլալու կամ
 չըլլալու խօսքը չի կայ), ուզեց վեր-
 ջին փորձ մըն ալ ընել համոզելու հա-
 մար Կամսարական էժէնսին որպէս զի
 շարունակէ իր պաշտօնը: Կամսարա-
 կան էժէնսին ցաւօք յայտարարեց թէ,
 հակառակ իրեն նկատմամբ արտայայ-
 տուած այսօրին համակրական ցոյցե-
 րու, իր պաշտօնը շարունակելու անկա-
 րելիութեան մէջ կը զսնուի, որու վրայ
 Վսեմ. Փաշայն նկատողութեան առնելով
 Արմենակ էժ. Կամսարականի սոյն յայ-
 տարարութիւնը՝ ցաւօք տեղեկացուց ժո-
 դովին թէ Միքայէլ Պէյ Բէրզեան եւս
 նոյն պատճառներով (այսինքն իր գոր-
 ծերու շատութեան եւ անձնական սկա-
 րտութեան պատճառով) հրաժարելու
 հարկին մէջ զսնուիլը հաղորդած է Ն.
 Վսեմութեանը: Հոս զանց առնուած է
 Վսեմ. Փաշային սա նշանաւոր խօսքը.
 «Կը ցաւիմ որ այս կերպով Խորհրդին
 նի՛ւր ամենէն կարեւոր անդամներն են
 որ կը հրաժարին. ես ամենէն աւելի
 անոնց վրայ համարում եմ վստահու-
 րիւն ունէի:» Բայց շատ զիրարմբնելի
 է այս զանցառութիւնը. մեր պաշտ-
 օնական մարմիններուն մէջ դժբաղդա-

բար սովորութիւն եղած է իրենց ար-
 ձանագրութիւնները *կոկեղ*, այսինքն
 արտասանած վիրաւորիչ բառերը ջըն-
 ջել, անախորժ միջադէպներ լու-
 թեան անցնիլ: Նոյնը եղած է այս
 պահուս մեզ զբաղեցնող արձանագրու-
 թեամբ վերաբերմամբ ալ. բայց տղ
 ընդ մէջ կարդալու էիք մը վարժութիւն
 բառական է՝ մէկ քանի բառերու շակ
 պահուած բոլոր գաղտնիքին խորը թա-
 փանցելու համար: Գալով ինձի, ար-
 ձանագրութեան այս վերլուծումը ըրած
 ժամանակս՝ ենթադրութիւններէ չէ՛ որ
 կառաջնորդուիմ, այլ մէկէ աւելի ի-
 րազեկ անձերու հարազատ պատմու-
 թեանէն:

«Ասոր վրայ (այսինքն Վսեմ. Փա-
 շային վերոյիշեալ չ'արձանագրուած
 վիրաւորիչ ակնարկութեանը վրայ)
 Գէորգ էժ. Իփէեան եւս խնդրեց որ
 ի՛ր ալ հրաժարականը ընդունուի:»
 Տիար Գ. Իփէեանի այս հրաժարա-
 կանը պարզ չէր, այլ բողոքախառն.
 Բայց Վսեմ. Փաշային նկատմամբ ակ-
 նածանձով մը, այս կէտն ալ ֆօրա-
 կուած է: Սակայն այս ամենը երկ-
 րորդական են. ամենէն կարեւորը եւ
 էականը Ասեմագրութեան մնացեալ
 մասն է. ահա՛ այդ մասը.

«Այն ասեմ Վսեմ. Ասեմապէտ բա-
 շան յայտարարեց թէ *իրերու արդի վի-
 ճակին մէջ ԻՆՔԸ ԿՍՐԵԼ ԻՌԻԹԻԻՆ ԶԻ
 ՏԵՍՆԵՐ ՈՐ ԺՈՂՈՎԸ, ԱՅՍՊԷՍ ԻՐ ՄԵ-
 ԾՄՄՍՄՆՈՒԹԻԻՆԸ ԿՈՐՍՆՅՈՒՅՍԾ, ԿՍ-
 ԲԵՆԱՅ 09.00.40.Բ ՀԱՆԴԻՍՍ.ՆԱԼ, մա-
 նաւանդ այսօրին փափուկ պարագա-
 ներու հանդէպ».* Ո՞վ կրնայ ըսել թէ
 Վսեմ. Փաշայի սոյն յայտարարութիւնը
 բացարձակապէս համարժէէ չէ *ժողովը
 յոժուած հոյակեղու*. ուրեմն ի՞նչ նշա-
 նակութիւն կրնայ ունենալ Ասեմագրու-
 թեան մէջ անցուած ըլլալը կամ ոչ՝
 յոժումը բաւին, երբ այդ բառին ներ-
 կայացուցած *վիճակը* իրապէս գոյու-
 րիւն առած է: Բայց այս՝ դեռ միայն

Վսեմ. Փառային յայտարարութիւնն է, եւ կանայ առարկուիլ թէ ժողովը կրնայ իրապէս յոժուած չի նշանուիլ, եթէ ինկը ժողովը հանակարծիք չի գտնուի իր Աստեանպետիկն: Բայց ահա այդ առարկութիւնն ալ կը ջնջուի Վ. Փառային յիշեալ յայտարարութեան անմիջապէս յայտարարող հետեւեալ բաներով:

«ԺՈՂՈՎԸ ՀԱՄԱԿԱՐԾԻՔ ԳԸՏՆՈՒԵՑԱԻ ՎՍԵՄ. ԲԱՇՍՅԻ ՍՈՅՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ (ուրեմն նովին գործով ինքզինքն ԼՈՒԾՆԱԼ ՀՈՉԱԿԵՑ) որովրայ (այսինքն ժողովը լուծեալ հռչակուելուն վրայ) Ն. Վսեմութիւնը յայտնեց թէ պիտի մտածէ դարման սանիլ այս վիճակին (ժողովը չէ՛ որ պիտի մտածէ, գիտիլ իբր մարմին գոյութիւն չունի, ալ Վսեմ. Փառան ինկը պիտի մտածէ՛ իր Մշակակն Աստեանպետի հանգամանքովը) եւ թէ առ այդ — միտ Վսեմ. Փառային խօսեան եւ — ԻՐԵՆ ԿԸ ՎԵՐԱՊԱՀԷ ԱՅՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ ՈՐՈՆՅԳԻՄԵԼՈՒ ՀԱՐԿԻՆ ՄԷՋ ՊԻՏԻ ԳՏՆՈՒԻ ՈՐՊԵՍ ԶԻ ԱՉԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ ԶԻ ՎՆԱՍՈՒԻՆ ԱՅՍ ՎԻՃԱԿԵՆ: (Ո՞ր վիճակէն. — Անուտ ԹԱՂ. ԽՈՐՀՐԳԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԻՃԱԿԵՆ. — անկէ տարբեր ի՞նչ պատասխան կարելի է տալ այս հարցման, ո՛վ բանիբուն «թղթակից»: Եթէ Թաղ. Խորհրդի լուծման, յայտնի իրողութեան դէմ ամենաթեթեւ կասկածի հետ մը իսկ մնացած ըլլար ու եւ է անաչառ ընթերցողի մտքին մէջ՝ Աստեանպետեան այս վերջին բառերը, Վսեմ. Փառային այս վերջին խօսեան բառական պիտի ըլլային կասկածի այդ յետին մնացորդն ալ փարատելու: Արդարեւ եթէ ժողովը լուծուած չըլլար, ի՞նչ իրաւամբ, ի՞նչ հեղինակութեամբ սահմանադրական այդ ժողովին Աստեանպետը պիտի յայտարարէր թէ իրեն կը վերապահէ՞ ձեռք առնելիք միջոցները:

Իսկ այդ միջոցները եղան, ինչպէս գիտեմք, Օրէն Խրտիպեալի գումարումը

եւ նոր, դարավերջիկ Թաղ. Խորհրդի մը կազմութիւնը Ն. Վսեմութեան կողմէ, առժամեայ հանգամանքով:

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

— ՏԱՏԵԱՆ ՎՍԵՄ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՇՍՅԻՆ մահը կը գուժեն Կ. Պոլսոյ թերթերը: Թուրքիոյ պետական մեծագոյն գէմբերէն մին եղաւ այս Հայը, որուն ազգ. կեանքին գնահատուածը, նպատաւոր թէ աննպատ, կը թողունք ժամանակի դատաստանին: Առ այժմ ընդունինք որ Թուրքիան անփոխարինելի կորուստ մ'ըրաւ յանձին իր Արտարին Գործ. Խորհրդական նախարարին:

— ՍՊՍՈՒՄԸ ՎԵՐՉԻՆ ԼՈՒՐԸ. — Հոկտ. 31-ի երկու հեռագիրներով կը ծանուցուի թէ՛ Միջերկրականի Փրանսական նաւատորմին մէկ մասը մեկնած է Արևելք, Թուրքիոյ գէմ ցոյց մ'ընելու նպատակով:

Գայեար ծովակալին հրամանատարութեան տակն է յիշեալ նաւատորմիչը, որ հոկտ. 31ին Թուրքիէ մեկնեցաւ կնքուած հրամաններով: Կը կարծուի թէ անի թրքական կարևոր նաւահանդիստ մը պիտի գրաւէ ու ձեռք ղնէ մաքսատանց հասոյթին վրայ:

— ՅՐԱՆԳՈՒԹՈՒՐՔ ՎԷՃՆ ՈՒ ՀԱՅԿ. ՀԱՐՅԸ. — Կառավարութիւնը խնդրեց որ նոյ. 15 ին յետաձգուի Տ. Սէմպայի հարցապնդումը, որ կը վերաբերի Կ. Պոլսոյ քարափանց ղնկերութեան նու թուպինիի և Լորանտոյի գործերուն ի նպատակ մրանսայի միջամտութեանը, մինչդեռ ձեռնպահ կը մնայ Հայերուն նպատաւոր դիրք մը բռնելէ:

Խորհրդարանին նրբանցքներուն մէջ կը կարծուի թէ՛ յետաձգում ուղուեցաւ անոր համար որ մինչև նոյ. 15 պէտք է արդէն Փրանսայի ու Ռուսիոյ միջև կնքուած ըլլայ համաձայնութիւն

մը որ հիմայ բանակցութեան առարկայ է և որուն նպատակն է՝ ի հարկին՝ ստիպել Թուրքիան Հայկ. հարցը լուծելու:

Տէլքասէ — կ'ըսեն իր բարեկամները — իր մեծ պարկեշտութեամբ գիտէ թէ ո՛րքան անբարոյականութիւն կայ պահանջներուն մէջ, որոնց ինպաստ միջամտած է Ֆրանսան և կը նախընտրէ հարցապնդողին պատասխանել կրնալ թէ՛ Ֆրանսան Թուրքիոյ հետ բոլոր առկախ խնդիրները պիտի կարգադրէ, մէջ տեղ զնեւելով պատրուակ մը, որուն հանրային կարծիքն աւելի համակիր է:

Այս օրերս հայկ. շրջանակներու մէջ կը տեսնուի անսովոր շարժում մը, որ կրնայ նկատուիլ իբր ապացոյց շրջող զրոյցներուն լրջութեանը:

(ԹՐԻՊՈՒՆԱ)

— ՖՐԱՆՑԻՅԱՆ ԹՈՒՐԿՎՈՒՆԱՆ — Թուրքիոյ 29 հոկտ. ին կը հեռագրուի. «Լրագիրները ծանուցին թէ՛ մարտաները կը պատրաստուին եղեր թրքական շրբը զրկուելու:»

— ԹՈՒՐԿԻՅԱՆ ՀԵՏ ԳԻՒՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԵՎԵՐԵՐՈՒԹԵԱՆԵՆԵՐԸ ԽՈՐՈՄԻՆ ԱՆԹԻՆ Տ. ՍԵՆԱԿՈՒՍԻ ՀԱՐԿԱՎՈՒՄԻՆ ՕՐԸ ՈՐՈՇՈՒԹ Է ՆՈՅ. 15:

— ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՐԱՆԻՆ 22 հոկտ. ի նիստը պիտի նուիրուի նախ օրակարգին կարգադրութեան: Առաջին գործը պիտի ըլլայ որոշել զանազան հարցապնդումներու վիճաբանութեան թուականը: Շատ մը հարցապնդիչներ, ի մէջ այլոց, Պ. Կուժոն, (Տավուզ գորպայտին տեղը դրուած) դիտաւորութիւն ունին ազդուօրէն պնդելու իրենց յարուցած հարցերուն անմիջական վիճաբանութեան համար: Միւս կողմէ, ստոյգ կը թուի թէ՛ այսօրուան կառավարութեանը հարցում կամ հարցապնդում պիտի ուղղուի ընդհանուր գործադուլին վրայ: Այս պարագային, Տ. Ուալտէք — Ռուսոս կ'ըսեն թէ տրամադիր է կարգաւ պատասխանելու և

անոնց իմացընելու ձեռք առնուած միջոցներն ու տրուած հրահանգները:

Պէտք է ուրեմն յուսալ անմիջական պայքար մը, և ընդհանուր կարծիք կայ թէ այս պայքարը, ի՛նչ որ ալ ըլլայ, շուտով մեծ վիճաբանութեան մը ձև պիտի առնէ դահլիճին ընդհանուր քաղաքականութեանը վրայ: Այս վիճաբանութիւնը պիտի թոյլ տայ կառավարութեան՝ առանց մասնաւոր վիճաբանութեան կարգադրել նեղիչ խնդիրներ և մինչև իսկ քանի մը պարագայի պարսաւներ պարտկել վստահութեան ընդհանուր օրակարգով մը:

Բայց կա՛յ շարք մը հարցապնդումներու, որոնցմէ չը պիտի կարելի ըլլայ ճողոպրել այս եղանակով: Ասոնք են Հայաստանի նոր շարգերուն վրայ ըլլալիք հարցապնդումները: Հարցապնդիչները, Պ. Պ. Սէմպա ու Ռուանէ ձեռքի մէջ ունին վաւերաթուղթեր որոնք ոչ մէկ տարակոյս կը թողուն այն խժոժութեանց վրայ, որոնց թատրն է Հայաստան այս պահուս: Կառավարութիւնը կը ճանչնայ այս վաւերաթուղթերը: 2' կրնար ուրանալ անոնց ոչ վաւերականութիւնը ոչ ալ կարևորութիւնը: Այս պայմաններու մէջ, յուսալի է թէ պիտի հասկնայ այս ծանրակշիռ ու տագնապայոյզ հարցին վրայ որչափ կարելի է շուտով խորունկ պայքար մը բանալու անհրաժեշտ հարկը:

— ՏՐԱՆՍԻՆ ՄԵՌԱՄԵՆ Է. — Տուրպանէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տրուէզի մահուան շուկը շրջեցաւ, բայց այս մասին քաղուած յայտարարութիւնները հակասական են ու բացարձակապէս կը պակսի հաստատական լուրը: — Կարևոր անձնաւորութիւններու վկայութիւնները կան, հաստատող թէ ողջ է Տրուէզ: Ո՛վ գիտէ Պօէր անուանի պետը ի՛նչ նորանոր անակնկալներ պահած է իր թշնամիներուն ու աշխարհին:

— ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԸ. — Գայեար Թուրքիոյ վերադարձաւ, որովհետև Սուլթանը զիջում ըրաւ Ֆրանսոյի պահանջներուն, սակայն տորմիլը կազմ է մեկնել:

— Իսալիոյ Բասուա Բաղափին Բարսարգիսական համալսարանին մէջ այս տարի հարիւր յիսուն երկու պսակաւորներ գտնուած են, որոց մէջ առաջին հանդիսացած է Իգմիրցի Հայ երեսասարդ մը, Պ. Յակոբ ունեիեան:

— Լօնսօնի Տէյլի Նիւզ ազատական քերթը, իր 25 տեսքով. թուոյն մէջ խօսելով Սասունի եւ Մուշի վտանգալի կացութեան վրայ, խստի կը բննադատէ Անգղիական կառավարութիւնը որ հակառակ Պէրլինի դաշնագրին եւ Անկլօ թրքական Պայմանագրութեան՝ կրկին որոշ պարտաւորութեանց, վաստակ լինած է Հայ ժողովուրդը վայրագ կառավարութեան մը նիւաններուն ներքեւ. կառավարութեան մը որ ուրիշ բան չէ բայց եթէ կազմակերպուած բարբարոսութիւն: Բայց ի՞նչ կարելի է յուսալ, կը բարունակէ, Անգղիայէն որ ինքն իսկ այս պահուս գրադած է ամբողջ կորովի ազգ մը բնաջինջ ընելու:

Գերմանիոյ Բաղափականութեան մէջ մարդասիրութիւնը երբէք մուտ գտած չէ: Գալով Ռուսիոյ, իր ներքին ու ընտանեկան կացութիւնը այնպէս է որ կարող չէ ան Սուլթանին ու իր գոհեռուն մէջ իրական միջամտութիւն մը գործել:

— Փարիզի Հայ Եկեղեցիին շինութիւնը, որուն հողը արդէն գտնուած է, զարման պիտի սկսի: Փարիզի Օփերա բասրոնը շինող Կարնիէ Բարսարապետը եւ իր որդին պիտի կառուցանեն զայն, խորհրդակցութեամբ արեւելեան Բարսարապետութեան ծանօթ Սէփոն Պէրնեանի:

— ՄԻՍ ԸՍԹՈՆԸ եւ իր ընկերուհին առեւանգող առաջակները Հոկտ. 8ը նշանակած են իբր սահման փրկանքի վնասման: Առաջակներու պահուած տեղը դեռ գտնուած չէ, բայց կը խորհուրի թէ անոնք իրենց ապաստանը ապահով կը համարին: Սօճիաւէն ստացուած տեղեկութիւնք կը վերահասուստեն

թէ Մակեդոնական յանձնախումբը ուղղակի պատասխանատու է Միս Ըսթոնի առեւանգման համար: Այդ յանձնախումբը շատ մը առաջակային խումբեր կազմած է իբր իր հակակառավարական գործողութեանց մին, որոց մին, Սարաբօճի վարչութեան ներքեւ, նախկին նախագահ յանձնախմբին, բռնած է Միս Ըսթոնը եւ իր ընկերուհին: Միս Ըսթոնէն հասած երկրորդ նամակ մը կը խնդրէ որ առաջակները չ'հալածուին, Բանգի երբ փնտռուին, զինք տեղէ տեղ կը փոխադրեն: Ինք վերջին ծայր յոգնած է բայց ուրիշ գանգատ մը չ'յայտնեն:

— Քրէոյց Յայթունկի մէջ սպուած նամակ մը հակա-գերման կը ներկայացրնէ Նախագահ Բօզվէլթը: Կ'ըսուի թէ ան ամեն ինչ պիտի ընէ Միացեալ Նահանգաց Գերմանացիները ամերիկացնելու համար, իրենց ազդեցութիւնը կոտրելու նպատակաւ: Նախագահը կը խորհի թէ Միացեալ Նահանգաց վտանգ սպառնացող միակ երկիրը Գերմանիան է:

ԿՈՉՆԱԿ

— ԹՈՒՐԻՔԻՈՅ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ . — Ամերիկեան մամուլը, Ադրանդայի Գօնադիդիոյ ընկերութեան մանատանը, այս օրերս կծու լեզու մը կը գործածէ Թուրքիոյ ներքին կացութեանը մասին ու Եւրոպայի տրամադրութիւնը շատ նպաստաւոր կը գտնէ Թուրքիոյ անհրաժեշտ բաժանումն իրագործելու:

«Կարելի չէ՛ տարակուսիչ թէ, կը յարէ այս քերթը, Թուրքիոյ վերջը մօտ է: Եւրոպական դիւանագիտութիւնն իր առջեւ ունի շոյ երեք ողորդութիւն.

1. Արտօնել Ռուսիոյ՝ գրաւելու Օսմ. տէրութիւնը:

2. Տարածել Յունաստանի իշխանութիւնը Թուրքիոյ վրայ, պահպանելով այս կերպով արդի հաւասարակշիւ կրօնութիւնը:

3. Ընդհանուր երուպական պատերազմ, որուն հետեանքը մէկը չ'կրնար կանխատեսել:

Կացութիւնը ծայրայեղօրէն ծանր ու նզնածամային է, ու առաջիկայ վիթխարի ընդհարումը՝ ժամանակի խնդիր է լոկ:

— ՀԱՐՅԱՊՆԴՈՒՄ ՄԸ. — Ֆրանսայի երեսելի երեսփոխան Տ. Սէմպա գեկուցած է արտաքին գործերու նախարարին թէ պիտի հարցապնդէ զինք 'ի մասին «*Ֆրանսայի միջաւժութեան 'ի Թուրքիա 'ի նպաստ Թուրքիոյի եւ Լորանսոյի ու անոր ձեռնպահութեան՝ հանդէպ Հայկական ջարդերուն:*»

— Պաշտատի կուսակալութեան մէջ կացութիւնը միտք ծանրակշիռ է: Պատերազմի նախարարը դեռ նոր դրկեց հոն 6րդ զօրաբանակի գնդերը, կարգը վերահաստատելու համար:

— ՔՈՈՒԷՂԻ ԽՆԴԻԲԸ. — Գերման թերթերը Քուէդի վէճին մէջ Թուրքիոյ կողմը կը բռնեն Անգլիոյ դէմ: Լոնտոնայի ու Պոմպէյի լրագիրներուն համար այս պարագան առիթ մ'եղաւ բուն յարձակումներ ընելու գերմանական ֆաղափականութեան դէմ:

— Թրքական ուղղակցութիւնը. — Շատ մ'ընտանիքներ որ գաղթել է յետոյ արտոնուած էին վերադառնալ Հին Սերայիս, երբ որ թուրք հողը կոխեցին, բանտարկուեցան:

Ռուսական դեսպանը, հակառակ իր ազգու ծանուցագրին, Մեոյ քաղաքայի դէպքերուն վերաբերմամբ, դեռ ո'չ մի գոհացում ընդունեց:

— ԵՐԻՏՍԱՍԱՐԴ ԹՈՒՐԿԵՐՆ ՈՒ Տ. ՏԷԼԳԱՍԷ. — Կ. Պոլսոյ Երիտասարդ-Թուրք գոմիթէն աղերսագիր մ'ուղղեց Տ. Տէլգասէի, Ֆրանսայի միջաւժութիւնը պահանջելով թուրք բնակչութեանց ատապանները թեթեւցնելու համար:

— ՖՐԱՆԳՕ - ԹՈՒՐԿ ՎԷՃԸ. — Ստոյգ կը թուի թէ Ռուսիան բան մը

պիտի չ'ընէ Բ. Դրան խնդրանքին ուժ սալու համար: Երկրորդ դիմում մ'ալ բրաւ Տ. Չինովիէճի՝ փափագ յայտնելով որ Թուրքիոյ շահերուն համաձայն լուծում մը տրուի:

Տ. Չինովիէճ լուր մը չ'ունի:

— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. — Բասեն գաւառին գիւղերուն մէկուն մէջ, թուրք եւ ռուս սահմանագլխին վրայ, պահականցին պէտք 30 զօրքի պաշտօն տրուաւ առեւանգելու Շողակաք անուն հայ աղջիկ մը, Ֆարհոնա գիւղէն: Այս վերջինին հայրենակիցներն ուզելով դիմադրել այս առեւանգումին, զօրերը 5 հոգի վիրաւորեցին անոնցմէ ու առին տարին աղջիկը: Սակայն, Կարնոյ կուսակալը Բէուճ բաւան՝ գերուհին ետ դարձրնել ու 12 զօր բանտարկել տրուաւ, Այս եղաւ վերջին արարքը Բէուճ բաւային, իր պաշտօնանկումէն առաջ, ու հաւանականօրէն այս արդար գործին երեսէ՛ն է որ ետ կանչուեցաւ: Սասունէն, ո'չ մէկ լուր:

— ՖՐԱՆԳՕ - ՌՈՒՄ ՆԻՉԱԿԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ. — «*Բրայօւրալնի Վոսթոք*» (Օրթոսոս Արեւելք) ժիտոսով լրագիրը որ Պուրէճի մէջ կը հրատարակուի Քրանտերէն եւ ռուսերէն լեզուով, ընդունած է Ս. Բեթերապուրկէն «ամենալաւ աղբիւրէ» հետեւեալ ամենակարեւոր տեղեկութիւնները, որոնք իսկոյն հեռագրուեցան աստիական եւ գերմանական թերթերուն:

«Ռուսիոյ Կայսեր Ֆրանսական Հանրապետութեան Նախագահին հետ ունեցած վերջին տեսակցութենէն ի վեր, Քրանգոնուս նիզակակցութիւնը նոր փուլի մը մեջ մտած եւ այլ եւս իր հիմնական պայրաններուն մեջ փոփոխուած է:

«Վերջին դեպքերուն հետեւանով, որոնք ֆաղափական երուպային — Երեւան նիզակակցութիւնն ալ մեջը հաշուելով — պայրանները փոփոխեցին, Քրանգոնուս նիզակակցութիւնը որոշած է այլ եւս որդուրդ այն ձեռնպահութիւնը զոր պահած էր մինչեւ ցայժմ: Իր միջաւժութիւնը զգալի

պիտի ըզայ եւ որոշապէս՝ թե՛ ֆաղափական եւ թե՛ ճնշասական խնդիրներու մէջ:

«Իր գործունէութիւնը պիտի կապ ունենայ թե՛ Գերմանիոյ մասնաշին ֆաղափականութեան եւ թե՛ այն անհանդուրժելի կաշուրեան հետ գոր ունին Պայքաններու եւ Փոքր Ասիոյ ֆրիսունեայ ժողովուրդները:


«Հարաւային Ափրիկէի խնդիրն ալ զանց պիտի չ'առնուի:

«Գաղով Մանչուրիոյ, անոր մասին խօսք չ'կայ:

«Վերջապէս Պ. Չենովիեֆ 'ի մօտոյ պիտի կանչուի Ս. Բեքերսպուրկ ուր ասեւն մը պիտի մնայ, ընդունելու համար հրահանգներ որոնք բոլորովին սարքեր պիտի ըզան միևնչեւ հիմա իր ստացած հրահանգներէն:»

(ԱՆՍ.ՀԻՏ)

Տ Գ Է Տ Ը



Հազիւ մտած է երիտասարդութեան օրջանին մէջ: Արդէն քանի մը տարիներէ ի վեր թողած է դպրոցը, կամ աւելի ճիշդը դպրոցները, որովհետեւ ամեն վեց ամիսը անգամ մը դպրոց փոխած է: Այդ կեանքը զուարճութիւններու օրջան մը համարած է. երբէք չ'է զգացած ուսման, զարգացման տենչն ու պէտքը: Բոլորովին պարսպ խելապատակով թողած է վարժարանը միայն իր անառակութիւններուն յիշատակը պահելով, այն ալ թերեւս պարծենալու համար, որովհետեւ երբ «Գիտես՞ դպրոցին մէջ ամենէն անառակն էի» ըսէ, կուրծքը հպարտութեամբ կուռի, եւ գոհունակութեան ժպիտ մը կը պատէ իր դէմքը, կարծես պարտականութիւնը լաւ կատարած ըլլալուն համար:

Ու հիմա, ոչ արուեստի փափաք ունի եւ ոչ ալ հաստատուն գործի մը մէջ աշխատելու: Աստանդական կեանք մը կը վարէ, եւ ասոր մէջ կը գտնէ միակ իստալը. «ազատ ըլլալ»՝ որը լիրք, ստանակ, անկիրք ըլլալ կը հասկնայ:

Հայերէն սահուն կարգալ գրել մ'իսկ պէտք եղածին պէս չը գիտեր, սակայն լեզուագէտ մ'ըլլալու յառակնոտութիւնը ունի. ամեն տեսելուդ, կը կը վստահացնէ քեզ որ, երկու ամիսէն ճիշտներէն, ամիսէ մը անգրիներէն, չորս ամիսէն իսպաներէն, եւ անկէ վերջ ալ, երկու երեք շաբաթէն, գերմաներէն ջուրի պէ՛ս պիտի սովորի. «Եւ արդէն կ'ըսէ, բաւական ճիշտներէն, իսպաներէն եւ յունարէն գիտեմ» եւ իր ըսածը ապացուցանելու համար, խօսած աստեւ օտար բառեր կը գործածէ անտանելի արտասանութեամբ Միայն երազն է Եւրոպա երթալ, մանաւանդ Բարիզ. «Գացած եմ» ըսել կարենալու համար:

Չի կարգար, միայն թէ լրագրները այժէ կ'անցընէ, այս ինչ կամ այն ինչ յօդուածին մասին կարծիք յայտնելու համար, ակադեմականի մը պէս, թէպէտ ամենասարական իմաստն իսկ չ'է հասկցած: Կ'ուզէ այնպէս ցուցնել որ իբր թէ աշխարհի բոլոր բանաստեղծներուն, գրագէտներուն, փիլիսոփաներուն գործերը կարգացած է. անուններ պահած է մեքին մէջ. Վոլթեր, Շէյքսպիր, Պայրոն, Կէօթէ. առաջնայն բանաստեղծութիւնները կը գովէ, երկրորդին պատմական վէպերը, երրորդին՝ փիլիսոփայական գրուածքները. եւ երբեմն ալ «Արդե՛օք, կը գոչէ, Կէօթէն մեռա՛ւ...»

Միտք իրմէ վարերուն հետ, եւ կամ իր նմաններուն հետ կը տեսնուի, անոնց հետ կը վիճարանի. վիճարանութիւն մը, որ բարեխոնական խստունակութեան հետ կրնայ մրցիլ, եւ թերեւս ալ գերազանցէ զայն: Իրեն հաշտակ խօսողները չը սիրեր. ո՛ւ՛՛՛՛՛՛՛՛, կ'ատէ զանոնք, եւ ապուշներ կը նկատէ. այնքան մեծ համարում մ'ունի իր վրայ որ, չէ կարող հասկնալ թէ ի՛նչպէս կրնան զինքը քննադատել: Շատ հաւանական է որ մեռած օրը գոչէ Ներսիսն. պէս. ժե՛ղն

մարդկութիւն, ո՛րքան մեծ համնար մը կը կորսնցնես:»

Վերջին ծայր շահախօս է, առանց խօսիլ գիտնալու. իր հագուստը, կամ ուրիշի մը փողկապին ձեւը, եւ կամ Պօլիս առած *բարսքսիւն*. ահա նիւթերը որոնց վրայ կը սիրէ նառել, երբ տամագիր չ'է ինկզիմէր գովելու: Ռոմիկեսեւ սոսկալի կերպով ինկնագով է, իր պատուաւորութիւնը կը հռչակէ, իր զգայնութիւնը, գրաստութիւնը. բարութիւնը կ'երգէ. կ'ուզէ որ իր վրայ հիանան. ամէն նիգ կը թափէ նոր ծանօթացած անձերուն ծաղրելի ֆօմբիւմաններ կ'ընէ, կեղծ արդիագիւ ձեւեր կը գործածէ ամենէն պարզ խօսք մ'իսկ ըսած ասեմ: Պարագային համեմատ, ազգասէր կ'ըլլայ մոլեռանդութեան հասցնելու աստիճան, առանց այդ վեհ զգացման ամենափոքր մասնիկն իսկ ունենալու:

Զարգացեալ դասուելու համար, անասուած է: Ազատամիտ դասուելու համար, ծնողքը կ'ասէ, իր թեմամբները կը նկատէ զանոնք, սակայն նեղը մտնելուն պէս անոնցմէ կը մուրայ:

Աղտոտ արիկայ մ'է: 16 տարեկանէն արդէն հանրատունները ամբողջ ծանօթ են իրեն: Եթէ հարցնես ինչո՞ւ այդ ցոփ կեանքը, «Քիզիֆապէս պէ՛տք կ'զգաս» կը պատասխանէ մասնաւորաբար շեշտելով «Քիզիֆապէս» բառը, ցոյց տալու համար որ գիտուն ալ է: Ու մասնաւոր երբ կիներու վրայ կը խօսի, իրեն յատուկ լեզու մը կը գործածէ. տիպով շաղախուած, ինկա՛ծը:

Ահա դասակարգ մը, որը պէ՛տք է բարձրացնել, ազնուացնել: Պատեալը այս բունաւոր տարին գոյութեան՝ լուրջ կրթութեան եւ դաստիարակութեան պակասն է: Ո՞վ է մեղաւոր !!!

ԳԱՍՊԱՐ

Հետեւեալ նամակը — ասեմէ մ'ի վեր խմբագրութեանս ղրկուած շատերէն մէկը — կուգայ, դժբաղդաբար, կրկին հաստատել աննախանձելի կացութիւնը Գահիրէի Գալստեան վարժարանին, գործախորդ թիւով մասնանիշ ըրած ենք արդէն, փափաք յայտնելով միանգամայն որ արդար լուծում մը տուէր *վարժուհիական հարցիկ*, որ արդէն չափէն ատելի երկարեցաւ:

Մեր Ազգ. իշխանութիւնները պէ՛տք է լաւ համոզուին թէ՛ ժողովուրդն այնչափ ատելի գոհ կը մնայ իր վարիչներէն ո՛րչափ նուազ ակամասես ըլլայ անոնց յոռի գործերուն. գործեր, որոնք փոխանակ հրապարակի վրայ բերուելու ի մեծ գայթակղութիւն հասարակութեան, լաւագոյն է որ անյապաղ կարգադրուին ձեռնաս վարչութեան ձեռնովը: Այս կարգէն է Գահիրէի Գալստեան վարժարանին առժամապէս տունը փառուած ուսուցչուհի Օր. Մանիսալեանի խնդիրը: Եթէ այդ ուսուցչուհին արժանի չ'է իր պատշտին, ինչո՞ւ ուրեմն տունը նստած տեղը կ'ընդունի իր ամսաթուակը. իսկ եթէ արժանի է, ինչո՞ւ այս փնտհան արգելքը պատշտավորութեան: Խեղճ Կարապետ Գալուս, գլուխդ վեր ա՛ն գերեզմանէդ, վայրկեան մը նայէ՛ թէ ի՛նչպէս կը գործածուին քու կտակած եկամտներդ...:

Իսկ դուք, հոգաբարձուի հագուստը կրող կրկնակի փորձանքներ, ի՞նչ ըսել կուզէք. մէկ կողմէն՝ տեսնագիտական հաշուով Օր. Մանիսալեանի ամսակալէն գեղջը. միւս կողմէն՝ Օր. Պէյլեանի յաջորդ կարգուիլը միեւնոյն պատշտին. այս երկու պարագաները իբրու հետ բոլորովին անհաւատ կը մնան, երբ այս հոգաբարձու պարտները, որոնք քանիցս յայտարարած են թէ՛ վարժարանի պիտեմէն սեղմելու հարկէն թելադրուած՝ նոր կարգադրութեան մը պէ՛տքն զգացած են, ու ահա ասոր անմիջական

հետեան՝ Օր. Մանիսայեանի հրատարու-
մը կը պահանջուի՝ եթէ չի համակերպի
առաջարկուած պայմաններուն: Արդ,
եթէ իրենց նպատակը վարժարանի շահն
էր, ինչու ուրեմն, փոխանակ այդ
շահին, կրկնապէս վնասելու հարկին
սակ դրին վարժարանը, միանգամայն
ձրի ամսականներ սալով, ի պատճառով
դադարեցուած վարժուիի մըն ալ, երբ
օրինաւորապէս իբր յաջորդ ընտրուե-
ցաւ Օր. Պէլլէեան: Ի՞նչու. կը հարցնենք
Պ. Հոգաբարձուներուն, երբ իրենց իրա-
ւասութեան գիտակցութիւնն ունենալու
յաւակնութեան հետ հակասական վի-
ճակի մը մէջ կիյնան իրենց խայտարակ
մահահանութեանց հետեւանօք, որոնք ո եւ է
կերպով դժուար պիտի ըլլար ըմբռնել,
եթէ արդէն նանցած չըլլայինք այդ
ողորմելիները իրենց հոգաբարձուի
պատճառով մէջ, որուն պատասխանա-
ստութիւնը բարեբաղձաբար չ'ենք կրնար
իրենց սալ:

Գահիրէ 25 Հոկտեմբեր 1901

Տէր Խմբագիր «Փիւնիկ» Շարա-
թաթերթի.

Աղեփասանդրիս

Խնդրեմ հաճիք չեղկայ գրու-
թեանս անկիւն մը շնորհել Ձեր «Փիւ-
նիկ» հանդէսի ազգասուէր էջերում:

Մի քանի օրերէ ի վեր Պատկ. Ե.
բեա. Ընդհ. Ժողովոյ Ս. Նախագահն և
Վսեմ. Ատենապետ Բաշան վերադար-
ձած են Մայրաքաղաքս իրենց տարե-
կան բացակայութենէն: Այլ ևս ամեն
սը անհամբերութեամբ կըսպասէ Պատկ.
Ժողովոյն ժամ առաջ գումարման, ուր՝
որպէս կը հաստատուի՝ վերջնականա-
պէս պիտի լուծուի և վարժուհիական
հարցն, որ մի քանի ամիսներէ հետէ՝
իւր ստացած այլազան փուլերով՝ խօ-
սակցութեան առատ նիւթ կը մատակա-
րարէ մերայնոց. դժբաղդաբար այս
խնդրում ևս իրենց ճիշդութեան դերն
կը խաղան վարժարանի Հոգաբարձու-

թեան երկու անդամներն՝ (1) Արմենակ
Կոկանեան և Աշխի Սիմօնեան, մա-
նաւանդ առաջինն որ տխրահոգակ ա-
նուն մ'եւեթ ունի իւր «Անբարոյա-
կանութեան սահմաններն զձեռու»
հարցոյն...:

Այս տհասները չփացեալ՝ Ազգ.
պաշտօնի մի գլուխ անցնելով՝ մեր Ս.
Առաջնորդի վրան բաց պաշտպանու-
թեան շնորհիւ (աստ ևս Սրբազաննիս
իւր կարողութեան չափը լիովին ցոյց
տուած է), եւ այն կարծեցեալ յաղ-
թանակէն թէ՛ իրե՛նք են անգղիերէնի
ուսուցիչ Տ. Գարեգին Եսայեանը պաշ-
տօնէ հեռացնողները՝ կը յանդգնին և
վարժարանի ուսուցչուհի Օր. Սօֆի Մանի-
սայեանը հեռացնել վարժարանէն, ի
հարկէ՝ ունենալով իրենց թագուն
նպատակները. ինչո՞ւ չէ, քանի որ Ա.
առաջնորդարաննիս նոյա կամաց հլու
գործիք կը ձեւանայ, իսկ Ժողովուրդն
անձայն անշուկ կ'ընդունի սրուած
հրամանները, լինին անոնք ի վնաս
նոյն իսկ իւր ապագայ սերնդին...:
Առ այս լղրճուկ յօդուածներ հրապա-

(1) Հոգաբարձութիւն ըսելով յօդ-
ուածումս կ'ակնարկեմ մի միայն սոյն
երկու նահիլներն. խորապէս կը ցա-
լիմ որ Կարապետ պէյ Շէրիսնեան՝ վեր-
ջերս իւր կրած անփոխարինելի կո-
րստեան պատճառաւ սխալուեցան ա-
միսներով վարժարանի դեկն այս երկու
իրենց մայրենի լեզուին իսկ անհմուտ
համբակներու յանձնել: Տրուած լինե-
լով իւր ընկերական դիրքն եւ ստացած
կրթութիւնն՝ յուսով ենք որ ինքն իսկ
գառաջինն պիտի բող քէ Գաւառ. Ժո-
ղովում իւր բացակայութեան գործուած
ոսկնագութեանց դէմ, — գոյս մի առ մի
թուել աստ զանց կ'ընեմ. — եւ պիտի
լսնդէ յամենայնի իրեն համահապասար
պատճառակիցներ, եւ ոչ թէ այսպիսի
սգէներ:

Մ. Յ.

րակ նետել կուտան «ԱՐՇԱԼՈՅՍ»ի էջերում մի ինչ-որ «Մեդիկ»ի, որ ըստ վերջին յայտնութեանց թարգմանի Կ.Գ. Ուզունեան, (այն Ուզունեանն, որ մի քանի ամիսներ առաջ նոյն տողերում յախուռն պայքար կ'ուղէր մղել այժմ զինքն շոյողներուն դէմ)՝ գաւառացիք ասոյ՝ «թխածը յղեց» անուներ կուտան, — Ուզունեանը վերջապէս որ վերջերս Ազգ. վարժարանում լիաթոշակ ամսականաւ — 300 դէկն. — կըսկսի դասախօսել, կարծեմ, նոր աղանդ մի՝ շաբաթապահութիւն. համայն գաղտնիք...»)

Բայց այս անգամ խնդիրն հոգաբարձու աղայիկներու ցանկացած արդիւնքն չ'տար: Ողջամիտ հասարակութիւնը կըսկսի գայթակղել իրաւանց դէմ բռնուած այս ընթացքէն: Ամէն կողմանէ դիմում, բողոք, հանրագիր կը տեղան Ազգ. Առաջնորդարանն, որ հուսկ ուրեմն ճարահատեալ՝ խնդիրն Պատ. Գաղաքական ժողովոյ սեղանին վրայ կը դնէ:

Անցեալ Սեպտ.ի սկիզբներն Քաղ. ժողովն ի նիստ կը հրաւիրուի, նախագահութեամբ Ս. Առաջնորդին, որ յատկապէս Ազգ. քսանդրիայէն հեռագրաւ կանչուած էր (ամեն տեղ մարդը հանդիստ չէն ձգեր): Ժողովն յետ երկար և անկողմնակալ քննութեանց կ'ընդունի որ բաց է ի բաց անձնական հակառակութիւն կայ Օր. Սօֆի Մանիսալեանն իւր պաշտօնէն հեռացնելու մինչ անդին Առաջնորդնիս իւր նախագահական Աթուին վերայ հանդիստ կը խորդայ — մանաւանդ որ հինգ տարիներէ ի վեր յիշեալ օրիորդին անստգիւտ վարքն ու անխոնջ աշխատութեանց արդիւնքներն բոլոր Գահիրէքնակ Ազգայնոց և ժողովներու միահամուռ քաջալերութեան և խրախուսանաց են արժանացած: Պատ. Գաղ. ժողովն այս խնդիրն իւր իրաւասութենէն վեր դատելով կը փոխանցէ

Ընդհ. ժողովին, որոյ կրկնակի դիմումներուն վերայ յԱզգ. Պատրիարքարան՝ Կ. Պոլսէ զրկուած է այն Օրիորդն: Միևնոյն ժամանակ Քաղ. ժողովը կը տնօրինէ որ Օր. Սօֆի Մանիսալեան իւր դասախօսութիւններն դադրեցնէ մինչև Ընդհ. ժողովոյ դումարումն, ցայն վայր իւր ամսականներն ստանալու պայմանաւ, ու իւր առժամեայ յաշորդն ունենայ: Եւ իւր այս որոշումն գրառորայես կը հաղորդէ հոգաբարձութեան:

Ուրեմն մենք բողոքովին անհիմն կը նկատենք «ՓԱՐՈՍ»ի վերջերս հաղորդած այն լուրն թէ՛ Օր. Մառի Պէյլէրեանի պաշտօնն միաժեպ պայմանաժամաւ ապահովեալ է: Ինչո՞ւ չէ միայն թէ հոգաբարձութիւնն յանձն առնէ՝ եթէ Ընդհ. ժողովն իրենց որոշման հակակարծիք գտնուի, սոյն Օրիորդի ամսականներն գրպանէն վճարել. ժողովուրդն այժմէն ճշմարտութեան գիտակ է և Տ. Սրապիսն Սամուելեանի միջադէպը տակաւին խիստ թարմ է ամէն մտքերում:

Շահեկանութենէ զուրկ չ'եմ համարիր մէջ բերել և հետեւեալ միջադէպը, որ տեղի ունեցած է սոյն ժողովում, դրապէս մի անգամ ընդ միշտ հաստատելու համար թէ՛ ո՞րքան ճշգրիտ են մեր վերև յիշած իրողութիւններն այս պսոյլի հոգաբարձուներու նկատմամբ:

Արմենակ Կոկանեան, որ այլևս հանրածանօթ անուն մ'է արբուռքի հասած Օրիորդի մը ուղղած «Անբարոյականութեան սահմաններն գծելու» հարցովն, տեսնելով որ բոլոր ժողովոյ անդամք արդարութեան կողմն կը բռնեն. յանկարծ ի մեծ ապշութիւն բոլոր ներկայից՝ կ'ուղղէ «խեղճ» մակդիրն Վսեմ. Եուսուֆ պէյ Ազիզի, դատաւոր Մայրաքաղաքիս խառն դատարանաց:

Ն. Վսեմութիւնը mal élevéով և եթ կը պատասխանէ իրեն անձին դէմ ե-


ղած սոյն անարգանաց. իսկ աւելորդ է ըսել թէ՛ ժողովը կը փութայ նոյն հետայն թողութիւն ինդրել ն. Վսեմութենէ՛ անարգողին ճանկոտքիւնն մէջ բերելով:

Թէև Վսեմ. Եռուսեֆ պէյ Ազիզ որքան որ չ'զիջանի օրինական միջոցներով՝ իրմէ կարի ստորագաս այս անհատի ազդու դաս մի տալ, այնուամենայնիւ քաղցր է մեզ յուսալ որ Ընդհ. ժողովն չ'պիտի վարանի կատարեալ դոհացում տալ իւր պատկառելի մի անդամին, որ գիտէ այնքան արժանաւորապէս բարձր պահել Հայ անունն յաչս Եգիպտ. կառավարութեան և Ընդհանուր հասարակութեանց:

«Մ՛վ դարբ, ո՛վ բարբ» պիտի գոչէր մեր ազնիւ բարեկամը Ս. Օ.:

ԽԱՉՉ ՁԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ



Գրագէտից, խմբագրից պիտի պահանջենք որ նա հետագօտի հասարակական հողը, քննէ նրան կազմող մասերը, զարթեցնի քնած մտաւոր գործիքներ, յարուցանէ մտաւոր հարուստ հանգրիւն արդիւնաբերութիւնը...:

Խմբագիրը քարոզիչ չէ... քարոզիչների դարը անցաւ. խմբագիրը աւխասող է, հասարակական երեւոյթների հետագօտիչն է:

Գ. Բ. ԱՐԾՐՈՒՆԻ

Եթէ դու ուզում ես ծառայել մի գործի — առաջ ինքդ պարտաւոր ես կուրօրէն հաւասար այդ գործի նեմատեսութեանը: Եթէ դու յոյս չունիս քո ոյծերի վրայ — մի՛ դուրս գալ ասպարէզ: Եթէ դու կամք չունիս — մի՛ կարծել թէ մագի չափ կարող ես ուրիշի կամքի վրայ ազդել: ՇԻՐՎԱՆՁԱՏԷ

Իր անձին ամօքը, կեանքին ամենամեծ սանջանքն է:

(Տիկին) ՏԵՒԻՆԷ

Բունը բնութիւնները իրենց կիրքերէն, պարագաներէն եւ դէպքերէն առաջ կը վարուին, շատ անգամ առանց կարենալ կարողութիւնները սահմանափակելու միտ, նա մանաւանդ իրենց կիրքերուն սասկոյրեան խաղալիք կըլլան երբեմն. կարծես յորձանք մըն է, որ գիրքն արագաբար կը սանի, ո՛ր, — իրենք ալ չեն գիտեր, գրեթէ դէպքերէն կախում ունի իրենց ընթացքը:

Տեսնել չարը եւ ծածկել զայն՝ հարուածելու եւ հալածուելու երկիւղով, արդարեւ հոգիի արխութիւնը չի յայտնուիր. մարդ մը որ կարծէ նեմարել անխաւարտիւն մը եւ կը լռէ, արդարութեան դէմ գողութիւն կը գործէ: Յոռին ծածկելը՝ զայն բուծել չէ, եւ մասնակից ընելը՝ չարը հոչակել չէ: Յոռին նանայելու է անկէ խոյս տալու համար: Այդ ընթացքը մտքի կարողութիւնը, սկզբունքներու հաստատութիւնը կ'ապացուցանէ. անա՛ այդ է առաքինութիւնը: Չարին անտեղեակ ըլլալը՝ անմեղութիւն է պարզապէս, եւ անմեղութեան մէջ արժանիք չի կայ, քանի որ ոչ մըցում կայ այնտեղ ոչ յարթանակ:

Ս. ՏԻՍՍԵ

Վախը չի տրամաբանե երբէք, եւ ետութիւնը չար խորհրդական մըն է: Մարդկային գործերուն մեծութիւնը՝ անոնց ծնունդ տուող ներուշումէն կը չափուի: ՕՎԸՆ ՏԵՂՔԱՄ

Թող սալ որ չարը իր չարութիւնը ի գործ դնէ, երբ կրնանք զինքը արգիլել, անոր չարութեան մասնակից ըլլալ կը նշանակէ:

Ինչ քողի սակ քաֆչի կեղծիքը, միտ հակասք մերկ կը մնայ նեմատեսութեան ակնարկին արջի:

ՎՈՎՆԱՐԿ

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
Ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդշնուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Գիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՑԱՆԱՆ

Աղեփսանդրիա, պզտիկ Մէնչիէ Ապուսարսա փողոց թիւ 10

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ բնօտի դեղորայք, սրէսխաշիթէներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Գեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԻՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱԷՆԷՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Բաղաքիս երևելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանգ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն. Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿՍԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեզերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանդամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատըր փողոցին մէջ, Ղաղարեան Եղբարց Վաճառատան դիմաց. գնացէ՛ք ճաշակեցէ՛ք առ տեսէ՛ք: